


ԹԵՐԹԵՐԻ ՊՈՒԱԴԻՔ-
ՅԵՎ ԲԱՆԳՑՈՒՂԹԸ-
ՑՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ո Ժ Ա Ն Դ Ա Կ Զ Ե Ռ Ն Ա Ր Կ Հ Ա Յ Ո Ց Լ Ե Զ Վ Ւ
ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԻ ՅԵՎ ՀԵՌԱԿԱՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեցին՝ Դ. Ա Տ Փ Ա Ն Յ Ա Ն
Ե. Ա. Դ. Ա. Յ. Ա. Ն.

Խմբագրեց՝ պրոֆ. Հ. Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն



ԲԳԱՑԻՆ ՀԱՅՈՑՍԱՆ» թ

ԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ան

1940

-6 NOV 2011

ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՂԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

491.99 (078)

0-93

այ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՈԺԱՆԴԱԿ ԶԵՌՆԱՐԿ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԻ ՅԵՎ ՀԵՌԱԿԱՅՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեցին՝ Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ե. Ա. Ղ. Ա. Ն.

Խմբագրեց՝ պրոֆ. Հ. Ա. Ճ. Ա. Ռ. Յ. Ա. Ն.

«ԽՈՐԴՐԱԳԻՐ» ՀԱՅԱՍՏԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒ

ՅԵՐԵՎԱՆ

491.99(078) 2616-4

4-93 | Uganda
Creepy Eye

13 ~~cent~~



2616
40

ՀԵՌԱԿԱՅՈՂ ՆԵՐԻՆ

Առւլյա ձեռնարկի նպատակն է ոճանդակել բանդյուղթղթա-
կիցներին և հեռակայողներին՝ սովորելու հայոց լեզվի քերակա-
նության հիմունքները :

Անշուշտ մեր ձեռնարկը չի պարունակում հայոց լեզվի ամբողջական քերականությունը։ Հեռակայողը պետք է ծանոթ լինի քերականության դպրոցական դասագրքերին (Գ. Սեվակ—«Հայոց լեզվի շարահյուսություն», Ա. Ղարիբյան—«Հայոց լեզվի քերականության դասագրիք»)։

Նկատի ունենալով, վոր մեր թերթերից շատերը միանդամայն քմահամ վերաբերմունք են ցուցաբերում կետադրության նկատմամբ և հաճախ անտեսում են կետադրության ամենատարբական սկզբունքներն անդամ, մենք նաև առաջարկում ենք հինգ ավելի մանրամասն տալ կետադրությունը:

Վարողերի ավելի լրիվ պարզաբանման համար պետք է դիմել վերև նշված դասագրքերին:

ԿԱԶՄՈՂՆԵՐ

Հ Ն Զ Յ Ո Ւ Ն Յ Ե Վ Տ Ա Ռ

Բառերը կազմված են հնչյուններից: Հնչյունը բառի, ինչպես
և առհասարակ մարդկային լեզվի, ամենանվազագույն նյութական
միավորն եւ:

Մեր մտածածը գրավոր արտահայտելու համար գործածում
ենք տառեր: Տառը հնչյունի գրավոր, բնական և տրամարանաշ-
կան արտահայտությունը չեւ և զոչ ել նրա պատկերը. տառը
հնչյունի պայմանականորեն ընդունված ու գործածվող նշանն եւ:

Հայերենի այբուբենը բաղկացած է 36 տառից: Մինչև 1922
թիվը գործածված այբուբենում կային նաև է, օ, և տառերը. և-ն
այժմ գործածվում եւ միայն ուշի մեջ, օ-ն բոլորովին՝ չի գործած-
վում, իսկ է-ն գործածվում եւ թվարկության համար (7-րդ):

Հայերենի այբուբենն կ' ա, բ, դ, դ, ե, դ, ը, թ, ժ, ի, ը,
խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, նշ, ո, չ, պ, ջ, ո, ս, վ, տ, ր, ց, ւ,
փ, ք, ֆ:

Սրանցից ձայնավոր են՝ ա, ե, ը, ի, ո, ու, մնացածը՝ բաղա-
ձայն:

Վ Ա Ն Կ

Մի շնչով արտարերված հնչյունը կամ մի քանի հնչյուն-
ների միացությունը կոչվում է վանկ. որինակ՝ սեղան, մատիտ,
թանաք և այլն:

Ամեն մի վանկ ունի մի ձայնավոր: Մի ձայնավորը առան-
ձին կարող եւ մի վանկ կազմել. որինակ՝ առու, աթոռ և այլն:

Բառերը կարող են լինել միավանկ և բազմավանկ. Միա-
վանկ են այն բառերը, վորոնք բաղկացած են մի վանկից. որի-
նակ՝ տուն, ու, արտ, դաշտ, հաց, ջուր և այլն: Մեկից ավելի
վանկ ունեցող բառերը կոչվում են բազմավանկ. որինակ՝ կու-
սակցություն, կոլխոզ, սովորել, վարչություն և այլն:

Յեթե վանկը վերջանում է ձայնավորով, կոչվում է բաց վանկ (ձու, կատու, գարի, գիշի և այլն), իսկ յեթե վերջանում է բաղաձայնով, կոչվում է փակ վանկ (ձուկ, դաշտ, կոլխող, դարբին և այլն):

ՏՈՂԱԴԱՐՁ

Դրելիս հաճախ տողի վերջում մի բառ ամբողջապես չի տեղափորկում, և մենք ստիպված ենք լինում այդ բառի մի մասը տեղափոխել հաջորդ տողը. դա կոչվում է տողադարձ: Տողադարձի ժամանակ բառը պետք է բաժանել վանկերի և ապա վանկերից մեկը կամ մի քանիսը ամբողջությամբ թողնել առաջին տողի վերջում, մնացածը տանել հաջորդ տողը: Տողադարձի նշանը (~) կոչվում է յենքամնեա:

Բառերը վանկերի բաժանելիս պետք է պահպանել հետեւյալ կանոնները.

Յերբ յերկու ձայնավորների միջև գտնվում է միայն մի բաղաձայն, այդ բաղաձայնն անցնում է հաջորդ վանկին. որինակ՝ թանաքաշման, համահավասար, իսկ յեթե մեկից ավելի բաղաձայններ կան, հաջորդ վանկին է անցնում միայն վերջին բաղաձայնը. որինակ՝ կարդալ գարնահավասար, հասնել, յերկրաշին, սերմնացան, զարքնել և այլն:

Բառի մեջ լսվող բայց չըրվող ը ձայնավորը տողադարձի ժամանակ գրվում է առաջին տողի վերջին վանկում, ինչպես և հաջորդ տողի առաջին վանկում. գլուխի, տեսնըլվել պըստվել, փընթփընթալ և այլն, իսկ յեթե հաջորդ տողն անցնող մասը ամբողջական բառ է, այդ գեպքում ըն չի գրվում. որինակ՝ կոլտնտեսություն, լրագրություն:

ՀՆՉՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բառերի փոփոխման ժամանակ, յերբ բառի ծայրին նոր վանկ է ավելանում, շեշտափոխության հետեւնքով բառի վերջին վանկի վորոշ ձայնավորներ փոփոխության են յենթարկվում: Դրանցից կարևոր են,

Փակ վանկում.

ա) ու ձայնավորը դառնում է ը. որինակ՝ ձուկ—ձկան, մուկ—

մկան—մկնդեղ, կամ բոլորովին սղվում է. որինակ՝ անտառն—անտառապահ:

բ) ի ձայնավորը դառնում է ը. որինակ՝ գիր—գրել, սիրոս—սրտալի, միս—մսագործ և այլն, կամ բոլորովին սղվում է. որինակ՝ ամիս—ամսաթիվ, մահիճ—մահճակալ ճահիճ—ճահճային, և այլն:

գ) ե ձայնավորը յերբեմն դառնում է ի, որինակ պարտեզ—պարտիզպան, գեղ—գիզել, յերբեմն ել մնում է անփոփոխ, որինակ՝ կեր—կերի, գետ—գետափ, բեռ—բեռնակիր, մեղր—մեղրամոմ և այլն:

դ) ու յերկինչյունը դառնում է ու. որինակ՝ լույս—լուսավոր, բույս—բուսական, գույն—գունավոր և այլն:

ե) յա յերկինչյունը և՛ փակ և՛ բաց վանկում դառնում է և. որինակ՝ մատյան—մատնաղարան, ատյան—ատնակալ գործունյա—գործունեություն, պաշտոնյա — պաշտոնեություն և այլն:

Բաց վանկում.

ու ձայնավորը դառնում է վ. որինակ՝ ձու—ձվի, լեզու—լեզվաբան: Բացառություն կարող են կազմել մի շարք բազմավանկ բառեր. որինակ՝ դասատու—դասատուի, թեկնածու—թեկնածուի, Ղամարլու—ղամարլուի և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Այլրենական կարգով գրել հետեւյալ բառերը.

Կոլտնտեսություն, վարչություն, դաշտ, պարտեզ, սեղան, աթոռ, բերք, հաց, գինի, մուրճ, ճարտարապետ, ձեռք, ծաղիկ, ցորեն, փիղ, շուշան, բոպե, ոռորի, քարտաշ, թարմ, տերև, չամիչ, սղ, փոսփոր, եղ, զանգ, ընդունարան, ժամացույց, իրավունք, լույս, խոտ, յեղեգ, նարինջ, ուրագ:

2. Արտագրել և վանկերի բաժանել հետեւյալ բառերը.

Գրասեղան, յերկիր, լուսավոր, կոլտնտեսություն, հարվածային:

3. Գրել տասը միավանկ և տասը բազմավանկ բառեր:

11 ՊԱՍ

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բառ և արմատ.— Բառ ե կոչվում հնչյունների այնպիսի միացությունը, վորը խմաստ ե արտահայտում. որինակ՝ հաց. իսկ ցիա ձեր, թեև հնչյունների միացություն ե, բայց բառ չե, վորովհետև խմաստ չունի:

Բառը կամ բառի այն մասը, վոր՝ այլևս չի բաժանվում բաղկացուցիչ մասերի և արտահայտում ե բառի հիմնական իմաստը, կոչվում է արմատ. որինակ՝ դաշտ-ային, խնձոր-ենի:

Արմատը կարող ենք գործածել իբրև առանձին բառ, և շատ բառերը միևնույն ժամանակ արմատ են. որինակ՝ հաց, տուն, դաշտ և այլն, բայց լինում են զեպքեր, յերբ արմատը իբրև առանձին բառ այլևս գործածական չե. որինակ՝ հը-դեհ:

Պարզ, բարդ և ածանցավոր բառեր.— Պարզ են կոչվում այն բառերը, վորոնք կազմված են միայն մի արմատից և վորեն մասնիկ չեն ստացել. որինակ՝ հաց, ջուր, պատրաստ:

Բարդ են կոչվում այն բառերը, վորոնք կազմված են յերկու կամ ավելի պարզ կամ արմատական բառերից. որինակ՝ լուս-ա-մուտ, տն-տես, հաց-քուխ, դաշտ-տ-վար, գր-ա-դարան-ա-պետ:

Ածանցավոր են կոչվում այն բառերը, վորոնք կազմված են արմատական բառի սկզբից կամ վերջից և կամ՝ թե սկզբից, թե վերջից այս կամ այն մասնիկն ստանալով. որինակ՝ դաշտ-ային գյուղ-ական, լուս-ավոր, ան-շարժ, դժ-գույն, ան-մու-ություն և այլն. Սկզբից գրվող մասնիկները կոչվում են նախածանց, վերջից գրվող մասնիկները՝ վերջածանց:

Կան բառեր, վորոնք միաժամանակ ե՛ բարդ են և՛ ածանցավոր. որինակ՝ գյուղատնտեսական, անգրագետ և այլն. սրանք կոչվում են բարդ ածանցավոր բառեր:

Հապավումներ.— Բարդության մի տեսակն ե կրծատումների միջոցով յերկու կամ ավելի բառերի միացումը. Այդ կատարվում է հետևյալ կերպով.

Բառաշարքի մեջ՝

ա) վերջին բառի ամբողջական, իսկ նրանից առաջ յեղածների սկզբից՝ մեկական վանկերի միացումով. որինակ՝ քաղաքորհուրդ, ժող-կրթ-բաժին և այլն;

բ) բոլոր բառերի առաջին վանկերի միացումով. որինակ՝ շրջ-գործ-կոմ, ժող-կոմ-խորհ և այլն;

գ) բառերի սկզբնատառերի միացումով. որինակ՝ ԽՍՀՄ, ԲԳԿԲ, ՄՏԿ և այլն,

Բառերը ըստ իմաստի և ըստ իրենց հնչյունական կազմի իրար նկատմամբ լինում են.

ա) Նույնանիշ-վորոնք իմաստով նույնն են լինում. որինակ՝ այտ - թուշ, յերես - գեմք, լուսամուտ - պատուհան և այլն.

բ) Համանիշ-վորոնք իմաստով նման են իրար, բայց նույնը չեն. որինակ՝ մութ - խավար, ձի - նժույգ, շինել - կառուցել և այլն:

գ) Համանուն - վորոնք ձևով նույնն են, բայց իմաստով տարբեր. որինակ՝ հոտ (վոչխարի) - հոտ (ծաղկի), այր (տղամարդ) - այր (քարանձավ), փող (դրամ) - փող (խողովակ), սեր (կաթի) - սեր (սիրել):

դ) Հականիշ-վորոնք իմաստով միմյանց հակառակ են. որինակ՝ հաստ - բարակ, յերկար - կարճ, լույս - խավար, լավ - վատ, արագ - դանգաղ, սիրել - ատել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Հետևյալ բառերը բաժանել արմատների և ածանցների. Գունավոր, անտեսանելի, քաղաքական, դարբնոց, լեռնային, վատահություն, տղետ, դժբախ:

2. Հետևյալ հապավումները գրել լրիկ բառերով. ԽՍՀՄ, Շրջգործկոմ, Համեր(բ)կ, ԲԳԿԲ,

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Հոլովում և հոլով։—Գոյականի այն փոփոխումը, վորի միշտով արտահայտվում է գոյականի պաշտոնը նախադասության մեջ, կոչվում է հոլովում, իսկ բառի հոլովման յուրաքանչյուր ձևը կոչվում է հոլով։

Հայերենում գոյականներն ունեն յոթ հոլով։ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական։

Թիվը ցույց է տալիս գոյականի քանակը։ Գոյականներն ունեն յերկու թիվ՝ յեզակի և հոգնակի։ Յեզակի թիվը ցույց է տալիս մի առարկա։ որինակ՝ գիրք, այգի, գաշտ և այլն, կամ նույնանման առարկաների հավաքական ամբողջությունը։ որինակ՝ բանակ, ժողովուրդ, հասարակություն և այլն։

Հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի առարկաներ։ որինակ՝ գրքեր, այգիներ, դաշտեր, բանակներ և այլն։

Հոգնակին կազմվում է յեզակի ուղղականի վրա ավելացնելով եր կամ ներ վերջավորությունը։ Միավանկ բառերի հոգնակին կազմելիս ավելացվում է եր (պատ—պատեր, դաշտ—դաշտեր, կով—կովեր, սար—սարեր և այլն) Բազմավանկ բառերի հոգնակին կազմելիս ավելացվում է ներ (կոլտնտեսություն—կոլտնտեսություններ, առու—առուներ, պատուհան—պատուհաններ, այգի—այգիներ և այլն)։

Յեթե բազմավանկ բառը վերջանում է նով, հոգնակի թվում ներ ավելացնելով ստացվում է յերկու և որինակ՝ կոմյերիտական—կոմյերիտականներ, գրադարան—գրադարաններ, վառարան—վառարաններ, սեղան—սեղաններ և այլն։

Կան մի քանի միավանկ բառեր, վորոնք գրաբարում վերջավորվել են նով։ այժմ այդ բառերը, թեև յեզակիում կորցրել են, բայց հոգնակիում վերականգնում են իրենց և հնչյունը, վորի հատեանքով հոգնակի մասնիկը լինում է ներ։ որինակ՝ վոտ (յեղել և վոտն) — վոտներ, յեղ—յեղներ, զուռ — զոներ, լեռ — լեռներ, ձուկ — ձկներ և այլն։

Հոլովմաք արտ բառը.

Յեջակի

ՀՈԴՆԱԿԻ

Ուղղ.—արտ

արտեր

Սեռակ.—արտի

արտերի

Տրակ.—արտի (ն)

արտերի (ն)

III ԴԱՅ

ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔԻ ՄԱՍԻՐ

Խոսքի մասերը հետեւալներն են, գոյական, ածական, թըվական, դերանուն, բայ, մակրայ, կապ, շաղկապ, ձայնարկություն։

ԳՈՅԱԿԱՆ

Գոյական են կոչվում այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկաներ կամ իբրև այդպիսին մտածվող ըմբռնումներ։ որինակ՝ մարդ, տնտեսություն, գետ, սոցմբցում, միություն, սեր և այլն։

Գոյականները լինում են հատուկ և հասարակ։ Հատուկ են կոչվում այն գոյականները, վորոնք տրվում են նույն տեսակին պատկանող առարկաներից միայն մեկին՝ մյուսներից զանազանելու համար։ որինակ՝ Մոսկվա, Յերեվան, Յերվանդ, Սպարտակ, Մասիս, Պերճ, Արաքս և այլն։

Հատուկ անուններ են՝ մարդկանց, քաղաքների, գյուղերի, լճերի, ծովերի, յերկրների, գետերի, լեռների, շրջանների, ինչպես նաև հիմնարկների, կազմակերպությունների, գործարանների, կոլլեջների անուններ։

Հասարակ են կոչվում այն գոյականները, վորոնք ընդհանուր են միևնույն տեսակի առարկաներից բոլորին՝ անխտիր։ որինակ՝ ծառ, մարդ, ծաղիկ, առու, արտ և այլն։

Հասարակ են նաև այն առարկաների անունները, վորոնք ընդհանության մեջ մեկ հատ են, որինակ՝ արև, լուսին, յերկրագունդ և այլն։

Հայց.—արտ

Բաց.—արտից

Գործ.—արտով

Ներգ.—արտում

արտեր

արտերից

արտերով

արտերում

Բոլոր բառերը միատեսակ չեն հոլովվում: Ամենատարածածը այստեղ բերված ձեն ե, սակայն կան գոյականներ եր վորոնք տարբեր ձևով են հոլովվում: Այդ տարբերությունը հատկապես յերեսում և յեզակի սեռականի վերջավորության մեջ: Հստ յեզակի սեռականի այդ տարբերության ել ունենք հետևյալ հովվումները՝ ի, ու, ան, յան, ոչ, որ, վա, ց:

Յ Ե Զ Ա Կ Ի

Ուղղ.—պատ, գինի, դուռ, վարչություն, ընկեր, հայր, որ,

Սեռակ.—պատի, գինու, դռան, վարչության, ընկերոջ, հոր, որվա.

Տրակ. պատի, գինու, դռան, վարչության, ընկերոջ, հոր, որվա.

Հայց.—պատ, գինի, դուռ, վարչություն, ընկեր^{*)}, հայր^{*)} որ,

Բաց.—պատից, գինուց, դռնից, վարչությունից, ընկերոցից, հորից, որվանից.

Գործ.—պատով, գինով, դռնով, վարչությունով, ընկերով, հորով. որով.

Ներգ.—պատում, գինում, դռնում, վարչությունում, (ընկերոջ մեջ), (հոր մեջ), որում:

Հ Ո Գ Ն Ա Կ Ի

Ուղղ.—պատեր, գինիներ, դռներ, վարչություններ, ընկերուներ, հայրեր, որեր.

Սեռակ.—պատերի, գինիների, դռների, վարչությունների, ընկերոների, հայրերի, որերի.

Տրակ.—պատերի, գինիների, դռների, վարչությունների, ընկերոների, հայրերի, որերի.

Հայց.—պատեր, գինիներ, դռներ, վարչություններ, ընկերներ^{*)}, հայրեր^{*)}, որեր.

Բաց.—պատերից, գինիներից, դռներից, վարչություններից, ընկերոներից, հայրերից, որերից.

^{*)} Անձ ցույց տվող բառերը, փորոշալ լինելու դեպքում, հայցականում նման են լինում տրականին (ընկերոջը, հորը):

Գործ. — պատերով, գինիներով, դռներով, վարչություններով, ընկերոներով, հայրերով, որերով.

Ներգ. — պատերում, գինիներում, դռներում, վարչություններում (ընկերոների մեջ), (հայրերի մեջ), որերում:

Կան մի քանի բառեր, վորոնք հոլովվում են վորոշ շեղումներով:

Յ Ե Զ Ա Կ Ի

Ուղղ. — մարդ, կին, աղջիկ.

Սեռակ. — մարդու, կնոջ, աղջկա.

Տրակ. — մարդու, կնոջ աղջկա.

Հայց. — մարդ^{*)}, կին^{*)} աղջիկ^{*)}

Բաց. — մարդուց, կնոջից, աղջկանից.

Գործ. — մարդով, կնոջով, աղջկանով.

Հ Ո Գ Ն Ա Կ Ի

Ուղղ. — մարդիկ, կանայք, աղջիկներ.

Սեռակ. — մարդկանց, կանանց, աղջիկների.

Տրակ. — մարդկանց, կանանց, աղջիկների.

Հայց. — մարդկիկ^{*)}, կանայք^{*)}, աղջիկներ^{*)}.

Բաց. — մարդկանցից, կանանցից, աղջիկներից.

Գործ. — մարդկանցով, կանանցով, աղջիկներով:

Անձի անունները և շատ ուրիշ բառեր ներգոյական հոլով չունեն, այդ իմաստի համար ոգտագործվում է մեջ կապը՝ սեռական հոլովի հետ. որինակ՝ հոր մեջ, կնոջ մեջ, մարդկանց մեջ, ուսանողության մեջ, իշխանության մեջ և այլն:

ԳՈՅԱԿԱՆԻ ԱՐՈՒԵՄՆԵՐԸ. — Դոյականները ցույց են տալիս անձ կամ առարկա. որինակ՝ անձ են ցույց տալիս՝ Աշխեն, Սուրեն, աշակերտ, մարդ, կոլտնտեսական և այլն. առարկա յեն ցույց տալիս՝ փայտ, սեղան, գիրք, հող, խոտ և այլն:

Անձ ցույց տվող առարկաները լինում են մարդկանց հատուկ կամ հասարակ անուններ:

Ցեթե գոյականը գործածվում է անձի առումով, նրա հայցական հոլովը նման է տրականին, իսկ յեթե իրի առումով է գործածվում, հայցականը նման է լինում ուղղական հոլովին: Իրի առումով էն գործածվում բոլոր առարկաների, իրերի, յերկույթների, կազմակերպությունների անունները:

^{*)} Տես 12-րդ եջի ծանոթությունը:

Գոյականները նախադասության մեջ կարող են գործածվել վորոշյալ կամ անորոշ առումով։ Վորոշյալ առումով գործածվելիս ստանում են ը կամ և հոգը, ը ստանում են բաղաձայնով վերացաղող բառերը, և ստանում են ձայնավորով վերջացող բառերը։ որինակ՝ մոտեցանք մի արտի (արտի գործածված և անորոշ առումով), մենք մոտեցանք արտին (արտին գործածված և վորոշյալ առումով)։

Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Գրել տասը հատուկ և տասը հասարակ գոյական։
2. Հոլովել հետեւյալ բառերը, արև, դաշտ, այգի, աշխատանք, քույր, յեղայր, լեռ, հաջողություն։
3. Հոգնակի գարձնել հետեւյալ բառերը, ձոր, պատ, գիրք, հաց, ջուր, ձուկ, զուռ, վոտ, ճանապարհ, բրիգադա, գրասենյակ, պատուհան, սեղան, թանաքաման։

IV ԳԱՍ

Ա Ծ Ա Կ Ա Ն

Ածական են կոչվում այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի հատկությունը կամ վերաբերությունը, այսինքն՝ ցույց են տալիս առարկայի ինչպիսի լինելը, ում կամ ինչին վերաբերելը։ որինակ՝ գեղեցիկ, կանաչ, կովտնտեսային, փայտյա և այլն։

Ածականներն ունեն համեմատության յերեք աստիճան։
ա) Դրական, յերբ ցույց է տրվում առարկայի հատկությունը, առանց համեմատելու վորեւ առարկայի հետ։ որինակ՝ գեղեցիկ, կարմիր, մեծ և այլն։

բ) Համեմատական, յերբ ցույց է տրվում առարկայի հատկությունը՝ մի այլ առարկայի հետ համեմատելով։ որինակ՝ ավելի գեղեցիկ, ավելի կարմիր, ավելի լավ, ավելի վատ և այլն։

շ) Գերադրական, յերբ ցույց է տրվում, վոր առարկայի ավյալ հատկությունը գերազանցում է այլ առարկաների նույն հատկությանը։ որինակ՝ ամենագեղեցիկ, ամենակարմիր, ամենալավ, կամ՝ գեղեցիկագույն, լավագույն, կամ՝ ամենից կարմիր, ամենից լավ և այլն։

Ածականները դոյականի հետ գործածվելիս չեն հոգովվում։ որինակ՝ կարմիր մատիտ, կարմիր մատիտով, կարմիր մատիտ և այլն. իսկ առանձին՝ իբրև գոյական գործածվելիս՝ հոլովվում են։ որինակ՝ կարմիր, կարմրի, կարմրից, կարմրով և այլն։

Թ Վ Ա Կ Ա Ն

Թվական են կոչվում այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի թիվը, կարգը կամ բաշխումն ըստ քանակի։

Թվականները լինում են՝
ա) Քանակական (մեկ, յերկու, յերեք, չորս, չինգ, ութ, տասը, քսան, յերեսուն, քառասուն, հիսուն, հարյուր և այլն)։
բ) Դասական (առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ, չինգե-

բորդ, ութերորդ, տասերորդ, քսաներորդ, քառասուներորդ, հարյուրերորդ և այլն) :

գ) Բաշխական (մեկական, յերկուական, յերեքական, քսանական, հարյուրական և այլն) :

Համառոտության նպաստակով զասական թվականների համար գործածվում են՝

ա) հայերեն այբուբենը, ա, բ, դ, գ, ե, զ, է, ը, թ, ժ, ժա, ժը, ժդ, ժե, ժե, ժդ, ժէ, ժը, ի, իա, իբ, իդ

բ) արաբական թվանշանները. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 20-րդ, 30-րդ, 50-րդ, 100-րդ.

գ) հոռմեական թվանշանները. I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XII, XIII, XIV, XV, XVI, XVII, XVIII, XIX, XX, XXX, XL, L, LX, LXX, LXXX, XC, C, CC, CCC, CCCC, D, DC. DCC. DCCC. DCCCC, M.

Թվականներն ել, ածականների նման, գոյականների հետ գործածվելիս չեն հոլովում, իսկ առանձին՝ իբրև գոյական գործածվելիս՝ հոլովում են. որինակ՝ յես ունեմ 10 մատիտ. նրանցից միկով գրում եմ: Գոյականը թվականի հետ գործածվելիս հողնակի թվով և դրվում, յերբ պետք են չեշտել նրա շատ լինելու դադարիալը. որինակ՝ հարյուր վաթուն կոլտնեսականներ զնացին դաշտ, իսկ յեթե չի չեշտվում նրանց շատ լինելը, այլ առնվում ե իբրև մի հավաքական ամբողջություն, ապա գոյականը գրը վում ե յեղակի թվով. որինակ՝ տասը սավառնակ ող բարձրացան:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Դերանունները են կոչվում այն բառերը, վորոնք ցույց են տալիս դոյականի, ածականի, թվականի կամ մակրայի լճուհանուր իմաստը և փոխարինում են նրանց. որինակ՝ Լառուրան գերազանցիկ ե. նա լավ ե սովորում:

Դերանունները լինում են.

ա) Անձնական (յես, դու, նա, մենք, դուք, նրանք և այլն).

բ) Ցուցական (այս, այդ, այն, ուս, դա, նա).

գ) Փոխադարձ (միմյանց, իբրար, մեկմեկու).

դ) Հարցական (ո՞վ, ի՞նչ, վ՞ո՞ր, քանի՞, ի՞նչպես, վ՞ո՞րքան, և այլն).

ե) Հարաբերական՝ նույն հարցական գերանունները՝ առանց հարցականի (ով, ինչ, վոր, վորքան և այլն).

զ) Վորոշյալ (ամեն, բոլոր, յուրաքանչյուր, ամբողջ և այլն).

է) Անորոշ (վամն, ինչվոր, այնինչ, այսինչ, վորեւ, այլ և այլն).

ը) Ժխտական (վոչ վոր, վոչինչ, վոչ մեկը, վոչ մի):

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄ

ՅԵԶԱԿԻ

Ուղղ — յես, դու, նա

Սեռակ — իմ, քո, նրա

Տրակ — ինձ, քեզ, նրան

Հայց — ինձ, քեզ, նրան

Բաց — ինձնից, քեղնից, նրանից, մեղնից, ձեղնից նրանցից

Գործ — ինձնով, քեղնով, նրանով, մեղնով, ձեղնով, նրանցով

Ներդ — ինձում, քեղնում, նրանում, մեղնում, ձեղնում, նրանցում:

Սա, դա ցուցական դերանունները հոլովում են նա անձնական դերանվան նման. որինակ՝ սա, սրա, սրան, սրանից, սրանով, սրանում: Այս, այդ, այն ցուցականները չեն հոլովում:

Ով, ինչ, վոր դերանունները հոլովում են այսպես.

ՅԵԶԱԿԻ

Ուղղ — ով

Սեռակ — ում

Տրակ — ում

Հայց — ում

Բաց — ումնից

Գործ — ումնով

Ներդ — ումնում

ինչի

ինչի

վորի

վորի

վորի

վորից

վորի

վորի

Ով և վոր դերանունները չունեն ներդոյական հոլով. դրա համար գործածվում ե մեջ կապը՝ սեռականի հետ. ում մեջ, վորի մեջ:



26/6
40

Ուղղ.—	ովքեր	լնչեր	վորոնք
Սեռակ.—	—	ինչերի	վորոնց
Տրակ.—	—	ինչերի	վորոնց
Հայց.—	—	ինչեր	վորոնք
Բաց.—	—	ինչերից	վորոնցից
Գործ.—	—	ինչերով	վորոնցով
Ներդ.—	—	ինչերում	վորոնցում

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Կազմել հետեւյալ ածականների համեմատական և դերաբական աստիճանները. դեղեցիկ, խիզախ, լավ, ագնիվ, հարվածային:

2. Հետեւյալ քանակական թվականները դարձնել դասական. մեկ, յերեք, չորս, վեց, տասը, տասնմեկ, քսան:

3. Արտադրել հետեւյալ հատվածը՝ ընդդեւով անձնական դերանունները.

«Կորեք անդրամ, դուք Մորա չներ.

Բա չե՞ք իմացել, դուք Մասմա սարել...

Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ շվաք,

Կուզեք մեր յերկիրը դնեք խարջի տակ»:

(Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ)

V ՊԱՍ

ԲԱՍ 3

Բայ են կոչվում այն բառերը, վորոնք ցույց են տալիս մի բան անելու կամ լինելու իմաստը:

Դերբայական և յեղանակային ձևեր.— Բայի դերբայական ձևեր կամ դերբայներ են կոչվում բայի այն ձևերը, վորոնք չունեն թիվ, դեմք, իսկ մի քանիսը՝ նաև ժամանակ, և ցույց են տալիս գործելու կամ լինելու ընդհանուր իմաստը. որինակ՝ խուել, լսող, աշխատելիս և այլն:

Հայերենի դերբայներն են՝

Անորոշ դերբայ— կարգալ, աշխատել

Անկատար դերբայ— կարդում, աշխատում, կարդալիս, աշխատելիս.

Ապառնի դերբայ— կարդալու, աշխատելու.

Վաղակատար դերբայ— կարգացել, աշխատել.

Հարակատար դերբայ— կարգացած, աշխատած.

Յենրակայական դերբայ— կարդացող, աշխատող:

Բայի յեղանակային ձևեր են կոչվում բայի այն փոփոխված ձևերը, վորոնցով արտահայտվում ե դործողությունը՝ յեղանակով, ժամանակով, թվով ու դեմքով:

ԴԵՄՔ.— Բայի յեղանակային ձևերն ունեն յերեք դեմք. առաջին դեմք, վորը ցույց է տալիս խոսողի գործողությունը. որինակ՝ յես տեսա: Յերկրորդ դեմք, վորը ցույց է տալիս խոսակցի գործողությունը. որինակ՝ դու տեսար: Յերրորդ դեմք, վորը ցույց է տալիս վոչ խոսողի, վոչ եւ խոսակցի, այլ մի յերրորդ անձի կամ տարկայի գործողությունը. որինակ՝ նա տեսավ:

ԹԻՎ.— Բայն ունի յերկու թիվ՝ յեղակի և հոգնակի:

Յեթե գործողություն կատարողը մի հոդի յե՝ յեղակի յե. որինակ՝ տեսավ, զնաց, անում ե և այլն, իսկ յեթե գործողություն կատարողները մեկից ավելի յեն՝ հոգնակի յե. որինակ՝ տեսանք, զնացիք, ասացին և այլն:

ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բայի փոփոխությունը՝ դեմքով և թվով՝ կոչվում է խո-նարհում:

Բայի յեղանակային ձևերով արտահայտվում են նաև ժամանակին ու յեղանակը. ժամանակը ցույց է տալիս, թե գործողությունը յերբ է կատարվում (ներկայում, անցյալում, թե պատայում):

Յեղանակը ցույց է տալիս խռովղի վերաբերմունքը գործողության նկատմամբ, այսինքն՝ գործողությունը հաստատագես կատարվում է, ցանկություն է, յենթադրություն, հրաման, թե՝ հարկադրանք. բայտ արդյո՞ւ ել կա հինգ յեղանակ.

- ա) Սահմանական ,
 բ) Քղձարկան ,
 գ) Պայմանական ,
 դ) Հարկադրական ,
 ե) Հրամայական :

ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՏԱԽՏԱԿ

1. ԱԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Դր	Առաջին խոնարհում			Յերկրորդ խոնարհում		
	Յեղակի	Հոգնակի	Յեղակի	Հոգնակի	Յեղակի	Հոգնակի
		Ն Ե Ր	Կ Ա			
I	սիրում եմ	սիրում ենք	կարդում եմ	կարդում ենք		
II	սիրում ես	սիրում եք	կարդում ես	կարդում եք		
III	սիրում ե	սիրում են	կարդում ե	կարդում են		
	Ա Ն Ց Ց Ա Լ Ա Ն Կ Ա Տ Ա Ր					
I	սիրում եյի	սիրում եյինք	կարդում եյի	կարդում եյինք		
II	սիրում եյիր	սիրում եյիք	կարդում եյիր	կարդում եյիք		
III	սիրում եր	սիրում եյին	կարդում եր	կարդում եյին		
	Ա Պ Գ Ա Ռ Ե Ն Ի					
I	սիրելու յեմ	սիրելու յենք	կարդալու յեմ	կարդալու յենք		
II	սիրելու յես	սիրելու յեք	կարդալու յես	կարդալու յեք		
III	սիրելու յե	սիրելու յեն	կարդալու յե	կարդալու յեն		
	Ա Ն Ց Ց Ա Լ Ա Ն Պ Ե Ն Ի					
I	սիրելու եյի	սիրելու եյինք	կարդալու եյի	կարդալու եյինք		
II	սիրելու եյիր	սիրելու եյիք	կարդալու եյիր	կարդալու եյիք		
III	սիրելու յեր	սիրելու եյին	կարդալու յեր	կարդալու եյին		
	Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր Ն Ե Ր Կ Ա					
I	սիրել եմ	սիրել ենք	կարդացել եմ	կարդացել ենք		
II	սիրել ես	սիրել եք	կարդացել ես	կարդացել եք		
III	սիրել ե	սիրել են	կարդացել ե	կարդացել են		

Բառական	Առաջին խոնարհում				Յերկրորդ խոնարհում			
	Յեզակի	Հոգնակի	Յեզակի	Հոգնակի				
	Վ Ա Ղ Ա Կ Ա Տ Ա Ր		Ա Ն Ց Ց Ա Լ					
I	սիրել ելի	սիրել ելինք	կարդացել ելի	կարդացել ելինք				
II	սիրել ելիր	սիրել ելիրք	կարդացել ելիր	կարդացել ելիրք				
III	սիրել եր	սիրել երինք	կարդացել եր	կարդացել երինք				
	Հ Ա Ր Ա Կ Ա Տ Ա Ր		Ն Ե Բ Ի Կ Ա					
I	սիրած եմ	սիրած ենք	կարդացած եմ	կարդացած ենք				
II	սիրած ես	սիրած եք	կարդացած ես	կարդացած եք				
III	սիրած ե	սիրած են	կարդացած ե	կարդացած են				
	Հ Ա Ր Ա Կ Ա Տ Ա Ր		Ա Ն Ց Ց Ա Լ					
I	սիրած ելի	սիրած ելինք	կարդացած ելի	կարդացած ելինք				
II	սիրած ելիր	սիրած ելիրք	կարդացած ելիր	կարդացած ելիրք				
III	սիրած եր	սիրած երինք	կարդացած եր	կարդացած երինք				
	Ա Ն Ց Ց Ա Լ		Կ Ա Տ Ա Ր Ց Ա Լ					
I	սիրեցի	սիրեցինք	կարդացի	կարդացինք				
II	սիրեցիր	սիրեցիրք	կարդացիր	կարդացիրք				
III	սիրեց	սիրեցին	կարդացից	կարդացին				

Հ. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Դաշտ	Առաջին խոնարհում		Յերկրորդ խոնարհում	
	Ցեղակի	Հոգնակի	Ցեղակի	Հոգնակի
Π	սիրի՛ր	սիրեցի՛ք	կարդա՛	կարգացի՛ք

3. ԸՆՁԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Դաշտ	Առաջին խոնաբհում			Յերկրորդ խոնաբհում		
	Ցեղակի	Հոգնակի	Ցեղակի	Հոգնակի	Ցեղակի	Հոգնակի
	Ա. Պ.	Ա. Ն.	Ա. Լ.	Ա. Պ.	Ա. Ն.	Ա. Ի.
I	սիրեմ	սիրենք	կարդամ	կարդաք	կարդանք	կարդանք
II	սիրես	սիրելք	կարդաս	կարդաք	կարդանք	կարդանք
III	սիրի	սիրեն	կարդա	կարդա	կարդան	կարդան

4. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Դիմում	Առաջին խոնարհում		Յերկրորդ խոնարհում	
	Յեղակի	Հոգնակի	Յեղակի	Հոգնակի
	Ա ՞ Ա	Ո ՞ Ն	Ի ՞ Ւ	
I	կոկոմ	կոկոնք	կոկոտամ	կոկոտանք
II	կոկոս	կոկոնք	կոկոտաս	կոկոտաք
III	կոկոբ	կոկոնք	կոկոտան	կոկոտանք
	Ա ՞ Յ Յ Ա Լ	Ա ՞ Ա Ո ՞ Ն Ի		
I	կոկոյիի	կոկոյինք	կոկոյայի	կոկոյայինք
II	կոկոյիիր	կոկոյինք	կոկոյայիր	կոկոյայինք
III	կոկոյին	կոկոյինք	կոկոյայի	կոկոյայինք

5. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Դիմում	Առաջին խոնարհում		Յերկրորդ խոնարհում	
	Յեղակի	Հոգնակի	Յեղակի	Հոգնակի
	Ա ՞ Ա	Ո ՞ Ն	Ի ՞ Ւ	
I	պիտի սիրեմ	պիտի սիրենք	պիտի կարդամ	պիտի կարդանք
II	պիտի սիրես	պիտի սիրեք	պիտի կարդաս	պիտի կարդաք
III	պիտի սիրեբ	պիտի սիրենք	պիտի կարդան	պիտի կարդանք
	Ա ՞ Յ Յ Ա Լ	Ա ՞ Ա Ո ՞ Ն Ի		
I	պիտի սիրեյի	պիտի սիրեյինք	պիտի կարդայի	պիտի կարդայինք
II	պիտի սիրեյիր	պիտի սիրեյիք	պիտի կարդայիր	պիտի կարդայիք
III	պիտի սիրեբ	պիտի սիրեյինք	պիտի կարդայի	պիտի կարդայինք

անալ և շենալ մոսնիկներն ունեցող բայերի խոնարհումն ունի հետեւալ պատկերը.

ՄՈՌԱՆԱԼ

ՄՈՑԵՆԱԼ

1. ՍԱՅՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Երկա. — մոռանում եմ, — ես, — ի, — ենք, — եք, — ին.
մոտենում եմ, — ես, — ի, և այլն.
Անց. անկ. — մոռանում եյի, — եյիր, — եր և այլն.
մոտենում յիի, — յիիր, — յը և այլն.
Ապառնի. — մոռանալու յիմ, — յիս, — յի...
մոտենալու յիմ, — յիս, — յի...
Անց. ապ. — մոռանալու եյի, — եյիր, — յը և այլն...

մոտենալու եյի, — եյիր, — յը...

Վաղակատար ներկա. — մոռացել եմ, — ես, — ե...
մոտեցել եմ, — ես, — ե...

Վաղակ. անց. — մոռացել եյի, — եյիր, — յը...
մոտեցել եյի, — եյիր, — յը...

Հարակատար ներկա. — մոռացած եմ, — ես, — ե...
մոտեցած եմ, — ես, — ե...

Հարակ. անց. — մոռացած եյի, — եյիր, — յը...
մոտեցած եյի, — եյիր, — յը...

Անցյալ կատարյալ. — մոռացա. մոռացար, մոռացավ...
մոտեցա, մոտեցար, մոտեցավ....

2. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

մոռացիր, մոռացեք.
մոտեցիր, մոտեցեք.

3. ԸՆՉԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ապառնի. — մոռանամ, մոռանաս, մոռանա...
մոտենամ, մոտենաս, մոտենա...

Անց. ապառնի. — մոռանայի, մոռանայիր, մոռանար...
մոտենայի, մոտենայիր. մոտենար.

4. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ապառնի. — կմոռանամ, կմոռանաս, կմոռանա...
կմոտենամ, կմոտենաս, կմոտենա...

Անց. ապառնի. — կմոռանայի, կմոռանայիր, կմոռանար...
կմոտենայի, կմոտենայիր, կմոտենար...

5. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ապառնի — պիտի մոռանամ, — մոռանաս, — մոռանա...
պիտի մոտենամ, — մոտենաս, — մոտենա...

Անց. ապառնի. — պիտի մոռանայի, — մոռանայիր, — մոռա...
նար...

պիտի մոտենայի, — մոտենայիր — մոտենար...

ԱՆԿԱՆՈՆ ՅԵՎ ՊԱԿԱՍՎՈՐ ԲԱՅԵՐ

Գալ, լալ, տալ միավանկ բայերը խոնարհվում են վորոշ չեղումներով. այսպես՝ տալ բայի ներկան կլինի առավես եմ, փոխանակ՝ տալում եմ, գալ—դալիս եմ, փոխանակ՝ դալում եմ, լալ—լալիս եմ:

Ավելի անկանոն են ուտել, ամել և այլ բայեր, վորոնց անցյալը կլինի՝ կերա, արի և այլն:

Կան նաև բայեր, վորոնց մի քանի ձեվերը պակասում են և կամ այդ ձեվերը դործածական չեն: Այդ բայերը կոչվում են պակասավոր բայեր, վորոնց թերի ձեվերը հաճախ լրացվում են վորեւ նույնանիշ բայի համապատասխան ձեռվ. որինակ՝ հուսալ ունի միայն ըղձական, պայմանական, հարկադրական և հրամայական յեղանակ, չի դործածվում սահմանական յեղանակով. հուսալ բայի սահմանական յեղանակը կազմվում և հույս ունեալ բայի համապատասխան ձեվերով (հույս ունեմ, հույս ունես, հույս ունի և այլն, փոխանակ առելու հուսում եմ, հուսում ես և այլն):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Արտադրել հետեւյալ հատվածը և ընդդեմ բոլոր բայերը.

«Սիրուն եր Հասոն, նոր ծագող արեի պես չքնաղ: Յերկրի աղջիկների ինելքը զնում եր նրան տեսներիս: Հապա նրա նվազելը: Երա սրնդից հանած ձայները կարելի՞ յեր, վոր հրեշտակներն ունենային այնքան զրավիչ, այնքան սիրահույզ: Զայներ, վորոնք խոսում եյին մելամաղձիկ, քրքջում եյին վորպես հեղիկ վտակ, դայլայլում՝ վորպես սիրահար սոխակ»:

(Վ. ՓԱՓԱԶՅԱՆ)

2. Խոնարհել աշխատել, գնալ և հեռանալ բայերը.

VI ՊԱՍ

ՄԱԿՐԱՅ

Մակրայ են կոչվում բայի ցույց տված գործողության տեղը, ձեռ, ժամանակը, ինչպես և առարկայի հատկության աստիճանը վորոշող բառերը:

Կան հետեւյալ մակրայները.

ա) Ժամանակ ցույց տվող (հիմա, այժմ, եզուց, վաղուց, արդեն, դեռ, նախ, իվերչո, վերջիվերչո, տարեցտարի, որեցոր, յերբեմն, այնուհետև, ապա և այլն):

բ) Տեղ ցույց տվող (ամենուրեք, ներքուստ, արտաքուստ, վիրուստ, դեմառեմ և այլն):

շ) Ձել ցույց տվող (ուժգին, լիովին, դարձյալ, հետզհետե, հաղիվ, նորից, կրկին, իրոք, անպատճառ, անշուշտ, կարծես և այլն):

դ) Քանակ ցույց տվող (քանիցս, բազմիցս, չսփականց, ամբողջովին):

ԾԱՆՈՒԹ.— Շատ հաճախ մեզ թերթերում քանակ ցույց տվող մակրայից հետո դործածվում և նաև անդամ բառը (քանիցս անդամ, բազմիցս անդամ), վոր դրաբար և:

Մակրայներ կարող են կազմվել հետեւյալ ածանցներով՝ որեն, արար, պես, ովին, որինակ՝ ուժգին-ուժգնորեն, հարկածային-հարվածայինորեն, ընկեր-ընկերաբար, հերոս-հերոսաբար, ընդհանուր-ընդհանրապես, մեծ—մեծապես, հիմն-հիմնովին, լի—լիովին, զլուխ—զլուխին և այլն:

ԿԱՐ, ՇԱՂԿԱՐ, ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կար կոչվում են այն բառերը, վորոնք նախադասության վորեւ անդամը կապում են իր լրացման հետ. որինակ՝ առանց, բացի, զեպի և այլն:

Շաղկար են կոչվում այն բառերը, վորոնք նախադասությունները, կամ նախադասության համազոր անդամները կապում

Են միմյանց հետ. որինակ՝ յես և դու ցանում ենք: Հարվածա-
յինները հայտարարեցին, վոր իրենք պետք է պայքարեն բարձր-
բերքի համար:

Շաղկապները լինում են՝

ա) Համադասական, վորոնք նախադասության համագոր ան-
դամները կամ համազոր նախադասությունները կապում են իրար
հետ. դրանք են՝ ու, բայց, սակայն, այլ, իսկ, կամ, այսինքն,
ուրեմն, ևս, ել, առա, նաև, այլեւ, ուստիմ, նույնպես, նույն-
իսկ և այլն:

բ) Ստորադասական, վորոնք յերկրորդական նախադասու-
թյունը կապում են զլիավոր նախադասության հետ. դրանք են՝
քե, յերե, վոր, վորպեսզի, վորովհետև, քան, մինչև, քեպետ,
քեկուզ, նախան, այնպես վոր, մինչդեռ, քանի վոր և այլն:

Չայնարկություն են կոչվում այն բառերը, վորոնք արտա-
հայտում են զգացմունք, հուզմունք, կոչ. որինակ՝ աշխահե՛յ,
ափս՛ս, ավա՛ն, յերանի՛ և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Արտադրել հետեւյալ հատկածը և ընդդել մակրայները
(մեկ դժով), կապերը (յերկու դժով), չաղկապները (յերեք
դժով):

«Եւմյոնովկայից ճանապարհը սկսում եր փոքր ինչ ցածրա-
նալ, իսկ բնության չքեզությունները նվազում եյին: Մի քանի
կանաչկոտ բրակներ անցնելուց հետո, յերեացին Զիբուխլիպի ալ-
քատիկ ցանքերը՝ հարուստ սեվահողի վրա: Կամարյանը հենց
նոր սկսել եր զիտել նրանց և զարմանալ այս տարորինակ հա-
կադրության վրա, յերբ մի նոր ու չքեզ տեսարան դրավից նրա
ուշադրությունը: Նրա աչքերի առաջ բացվեցավ հանկարծ մի
բաց-կապույտ գաշտ, վորին նա սկզբում հորիզոնը փակող մշուշ
կարծեց: Սակայն ուղեկից տիրացու Մոսինի «ահա ծովը» բացա-
կանչությունը սթափեցրեց նրան: Նա, ուրեմն, հասել եր Հայաս-
տանի բնության հաշալիքներից մինին՝ պատմական Գեղամա
ծովակին: Յեվ յեթե սկզբում չկարողացավ գուշակել, թե յուր
տեսածը, իրոք, Սևանն և, նա իրավունք ուներ, վորովհետեւվ
հեշտ չեր հագատաւ, թե յեռների այդ բարձրության վրա կարող
է գտնվել այսքան ընդարձակ մի լիճ, վորին իրավամբ, ծովակ
անունն են տվել»:

(ՄՈՒՐԱՅԱՆ)

VII ԴԱՅ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Բանավոր կամ գրավոր արտահայտված յուրաքանչյուր ամ-
բողջական մտածություն կոչվում է խոսք: Խոսքը կարող է լի-
նել հակերձ՝ մեկ կամ մի քանի մտքերից բաղկացած (առած,
կոչ և այլն), կարող է լինել ծավալուն՝ բաղմաթիվ մտքերից
բաղկացած (վեպ, պոեմ, գեկուցում և այլն):

Խոսքը բաղկացած է լինում նախադասություններից:

Նախադասություն է կոչվում բառերով արտահայտված յու-
րաքանչյուր ամփոփ միտք. որինակ՝ Գարնանացանն ավարտվեց:

Նախադասությունները լինում են յերկու տեսակ՝ պարզ և
բարդ: Միայն մի միտք արտահայտող նախադասությունը կոչ-
վում է պարզ նախադասություն (Յես զնացի ակումբ): Մեկից
ավելի միտք աքտահայտող նախադասությունները կոչվում են
բարդ նախադասություններ. որինակ՝ Յես զնացի ակումբ, վոր
կարկամ որվա թերթերը:

Միայն յենթակայից և ստորովյալից բաղկացած պարզ նա-
խադասությունը կոչվում է պարզ համառու նախադասություն
(տրակտորը հերկում է), իսկ բացի յենթակայից ու ստորովյա-
լից նաև յերկրորդական անդամներ ունեցող նախադասությունը
կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն (Յերեկոյան մենք
զնակու յինք ակումբ):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Նախադասության գլխավոր անդամներն են՝ յեկքակա և
ստորովյալ: Յենթակա յե կոչվում նախադասության այն անդամը,
վորը ցույց է տալիս մի բան անող կամ յեղող առարկան. որի-
նակ՝ կոլտնտեսականը զնաց գաշտ: Տրակտորը աշխատում է ան-
խական: Ստորովյալ է կոչվում նախադասության այն անդամը,
վորը ցույց է տալիս թե յենթական ինչ և անում, ինչ և լինում

կամ ինչ և . որինակ՝ Կոլտնտեսականը զեաց դաշտ։ Կոլտնտես-
ռությունը որ-որի ահում է։ Մեր գյուղը մեծ է։

Բացի յենթակայից և ստորոշյալից, նախադասության մյուս
անդամները, վորոնք պարզաբանում կամ լրացնում են նախա-
դասության միտքը, կոչվում են նախադասության յերկրորդա-
կան անդամներ կամ լրացումներ։ Լրացումները բաժանվում են
յմրկու խմբի՝ ա) յենթակայի լրացումներ, բ) ստորոգյալի
լրացումներ։

Յենթակայի լրացումներն են՝

ա) Վորոշիչ, վորը ցույց ե տալիս յենթակայի կամ նախա-
դասության այլ անդամի վորակը, վորոշությունը, չափը, քա-
նակը (կարմիր մատիտով գրում եմ։ Հարվածային կոլտնտեսա-
կանը պայքարում ե բարձր բերքի համար)։

բ) Հատկացուցիչ, վորը ցույց ե տալիս յենթակայի կամ
նախադասության այլ անդամի պատկանելությունը, հատկացու-
մը, վերաբերումը կամ սերումը (իմ գիրքը քեզ մոտ ե։ Կոլ-
տնտեսության արդիները շատ բերք են տալիս)։

գ) Բացահայտիչ, վորը ցույց ե տալիս յենթակայի կամ
նախադասության այլ անդամի ինչ կամ ով լինելը։ Բնդեր
Ստալինը՝ պիոլետարիատի առաջնորդը՝ մեզ առաջնորդում ե
դեպի նորանոր հաղթանակներ։ Լեվոնը՝ կոլտնտեսության լավա-
գույն բրիգադիրը՝ մասնակցելու յե Համամիութենական դյու-
դատնեսական ցուցահանդեսին)։

Ստորդյալի լրացումներն են. ա) Խնդիրներ, բ) պարագաներ։
Խնդիր են կոչվում այն լրացումները, վորոնք ցույց են տալիս
դորձողության հետ կազ ունեցող առարկան։

Խնդիրները լինում են յմրկու տեսակ.

1. Ռւգովակի խնդիր։ Վորը ցույց ե տալիս դորձողության անմի-
ջական առարկան, վորի վրա յե անցնում յենթակայի դորձողու-
թյունը. որինակ՝ ՄՏ կայանը վերանորոգեց տրակտորները։ Բւ-
թիլ խնդիրը դրվում ե հայցական հոլովով։

2. Անուղղակի խնդիրներ, վորոնք ցույց են տալիս դորձո-
ղության հետ անուղղակի կազ ունեցող առարկան։

Անուղղակի խնդիրները յերեք տեսակ են։

ա) Մատուցման անուղղակի խնդիր՝ այն առարկան, վորին
մոտեցվում կամ տրվում ե մի բան։ որինակ՝ Կոլտնտեսականը
մոտեցավ իր ընկերոջը։ Արշակը հասավ իր նպատակին։ Մա-
տուցման անուղղակի խնդիրը դրվում ե տրական հոլովով։

բ) Անջատման անուղղակի խնդիր՝ այն առարկան, վորից
հեռացվում ե մի բան, կամ սկսվում, ծագում ե դորձողությու-
նը. որինակ՝ Կոլտնտեսության տրակտորները վերանորոգվում
են ՄՏ կայանի կողմից։ Անջատման անուղղակի խնդիրը դրվում
է բացառական հոլովով։

գ) Միջոցի անուղղակի խնդիր՝ այն առարկան, վորի մի-
ջոցով կատարվում ե դորձողությունը. որինակ՝ Բրիգադայի
անդամները բահով գորում են հողը, շարքացանով՝ ցանում։ Մի-
ջոցի անուղղակի խնդիրը դրվում ե գործիական հոլովով։

Պարագաները. պարագաներ են կոչվում այն լարցումները,
վորոնք ցույց են տալիս դորձողության հետ կազ ունեցող հան-
դամանքները։

Պարագաները լինում են՝

ա) Տեղ ցույց տվող. որինակ՝ Կոլտնտեսականը աշխատում
է դաշտում. աշխատանքը վերջացնելուց հետո նա կնալու յի
տուն։

բ) Ժամանակ ցույց տվող. որինակ՝ Վաղլանության սկզբելու յե
ցանքը։ Յերեկ կոլտնտեսության յերբողք բրիգադան կատարեց
իր պլանը։

շ) Զեկ ցույց տվող. որինակ՝ Նա աշխատում ե հարվա-
ծայնորեն։ Աշուու ուրախությամբ հավանություն տվեց բրիգա-
դայի նախաձեռնությանը։

դ) Զափ ցույց տվող. որինակ՝ Այսոր յերկու անգամ գնացի
ՄՏ կայան. տրակտորներից չորսն ել նորոգված են։

ե) Նպատակ ցույց տվող. որինակ՝ Մինասը գնաց Մուկվա-
սովորելու։ Ոլյան գնաց սանատորիա, բուժվերու։

շ) Հիմունիք ցույց տվող. որինակ՝ Կոլտնտեսության վորոշ-
մամբ Հարվածայինները պարզեցարկեցին։

է) Պատիճառ ցույց տվող. որինակ՝ Հարվածայնության հա-
մար նա արժանացավ գովասանքի։

ԲԱԶՄԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ. — Հաճախ նախադասության մեջ
նույն պաշտոնով լինում են մեկից ավելի համազոր լրացումներ։
որինակ՝ ՄՏ կայանը վերանորոգեց տրակտորները, կոմբայնե-
րը և կալիչները։ Լեվոնը գրախանութից գնեց թուղթ, մատիտ
և գրիչ։ Նախադասության այսպիսի անդամները կոչվում են
բազմակի լրացումներ։

ՄԻՋԱԿԱՑԱԼ ԲԱՑԻԵՐ. — Նախադասության մեջ կարող են
լինել նաև այնպիսի բառեր, վորոնք նախադասության անդամ-

չեն, սակայն վերաբերում են այդ նախաղասությանը և վորոշ յերանդ կամ գուշազորում են տալիս նրան. որինակ՝ Պերճը, անշուշտ, արժանի յէ հարվածայնության: Նա, ի հարկե, կարող և կատարել իր խոստումը:

ԶԵՂՋՈՒՄ. — Հաճախ նախաղասության մեջ յենթական կամ ստորոգյալը զեղչվում էն, այսինքն՝ բառերով չեն արտահայտվում, այլ մտքով են հասկացվում. որինակ՝ Յես տուն եմ զնում, իսկ դու՛ ակումք (զեղչված և գնում ես ստորոգյալը): Խոսք եմ տվել այս տարվա պլանս զերակատարել (զեղչված և յես յենթական):

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Նախաղասության անդամների համազատասխանեցումը՝ դեմքով, թվով և հոլովով, կոչվում ե համաձայնություն:

Հայերենում դեմքով, թվով և հոլովով համաձայնվում ե բացահայտիչը բացահայտյալի հետ. որինակ՝ Սուրիկը՝ «Կոլխոզնիթի թղթակեցը՝ զնաց գաշտ: Յերեվանից՝ Հայաստանի մայրաքաղաքից՝ սմեն որ հազարավոր թերթեր են ուղարկվում շրջանները»:

Դեմքով և թվով համաձայնեցվում են յենթական և ստորոգյալը, այսինքն՝ ստորոգյալի դեմքը և թիվը համաձայնեցվում են յենթակայի դեմքին ու թիվին.

ա) Յեղակի յենթակայի հետ դրվում ե յեղակի ստորոգյալ. որինակ՝ տրակտորը աշխատում ե կանոնավոր, իսկ հոգնակի յենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ. որինակ՝ կոլտնտեսականները աշխատում են դաշտում:

բ) Յեթե յենթական անձնական դերանուն ե, ապա ստորոգյալը դեմքով համաձայնվում ե նրան. որինակ՝ յես աշխատում եմ, դու աշխատում ես:

գ) Բոլոր դոյսական և իբրև գոյսական առնված յենթականների ստորոգյալը դրվում ե յերբորդ դեմքով. որինակ՝ Պերը թույս տեսավ:

դ) Մեկից ավելի յենթականներ (բաղմակի յենթակա) ունեցող ստորոգյալը դրվում ե հոգնակի թվով. որինակ՝ տեսրը, մատիտը, քանաքը, գրիչը անհրաժեշտ գրենական պիտույքներ են:

Տարբեր դեմքերով բազմակի յենթակա ունեցող ստորոգյալը դեմքով համաձայնվում է միայն մեկին: Յեթե բազմակի յենթականներից մեկը առաջին դեմքի յե, ստորոգյալը անպայման առաջին դեմքի պիտի լինի, իսկ յեթե միայն յերկրորդ և յերրորդ դեմքով. որինակ՝ Յես, դու, Աշոտը գնացինք դաշտ: Դու և Սարգիսը կարգում եք:

ԲԱՐԴ ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախաղասությունները կազմվում են յերկու կամ ավելի պարզ նախաղասություններից: Այդ պարզ նախաղասությունների՝ իրար նկատմամբ ունեցած հարաբերության համաձայն ել բարդ նախաղասությունները կարող են լինել յերկու տեսակ:

ա) Բարդ համաղասական նախաղասություն.

բ) Բարդ ստորագասական նախաղասություն:

Համարական ե կոչվում այն բարդ նախաղասությունը, վորի կազմի մեջ մտնող պարզ նախաղասություններն իրար համագոր են և իրար միտք չեն լրացնում. որինակ՝ Զարիկը ցերեկն աշխատում ե, իսկ յերեկոյան հաճախում մեծահասակների դըպրոցը:

Ստորագասական ե կոչվում այն բարդ նախաղասությունը, վորի կազմի մեջ մտնող պարզ նախաղասություններից մեկը դիմավորն ե, իսկ մյուսները լրացնում են այդ դիմավոր նախաղասության միտքը. որինակ՝ Միշան խոստացել ե, վոր իր պլանը կատարի 130 տոկոսով:

Ստորագասական բարդ նախաղասության կազմի մեջ մտնող նախաղասություններից մեկը, վոր արտահայտում ե ամբողջ նախաղասության հիմնական իմաստը, կոչվում և գլխավոր, իսկ մյուսները, վորոնք լրացնում են գլխավորի միտքը, կոչվում են յերկրորդական նախաղասություններ:

Վերեվում բերված բարդ նախաղասության անդամներից առաջինը (Միշան խոստացել ե) գլխավորն ե, իսկ յերկրորդը (վորի պլանը կատարի 130 տոկոսով)՝ յերկրորդական: Յերկրորդական նախաղասությունները սովորաբար փոխարինում են գլխավոր նախաղասության վորեւ անդամին. որինակ՝ «Յերեկ Բաղրամը

Նիստից բացակայեց, վորովհետև հիվանդ եր» բարդ նախաղասության յերկրորդ անդամը (վորովհետև հիվանդ եր) ցույց է տալիս Բաղրատի բացակայության պատճառը և փոխադրինում եղիսակոր նախաղասության պատճառի պարագային. առանց մտքին վորեւ վնաս հասցնելու մենք կարող ենք զեղչեւ յերկրորդական նախաղասությունը և ասել. «Յերեկ Բաղրատը նիստից բացակայեց հիվանդության պատճառով»:

Յերկրորդական նախաղասությունները կարող են դրվել կամ դիմավորից առաջ կամ հետո և կամ դիմավորի մեջ:

Գլխավոր նախաղասությունից առաջ դրված յերկրորդական նախաղասությունը կոչվում է առաջադաս յերկրորդական նախաղասություն: Որինակ՝ Վոր Սահակը ստախանովաբար և աշխատում, այդ յես վաղուց դիտեմ:

Գլխավորից հետո դրված յերկրորդական նախաղասությունը կոչվում է հետադաս յերկրորդական նախաղասություն: որինակ՝ Տքակտորը համձնվեց ՄՏ Կայանին, վոր վերանորոգվի:

Գլխավոր նախաղասության մեջ դրված յերկրորդական նախաղասությունը կոչվում է միջադաս յերկրորդական նախաղասություն: որինակ՝ Արշակը, վոր ամբողջ տարին աշխատել եք ստախանովաբար, այսոր պարզեատրվեց:

ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴՍՍՈՒԹՅՈՒՆ

Հաճախ համադասական բարդ նախաղասություններն ունենում են միենույն յենթական, բայց տարբեր ստորոգյալներ, կամ ընդհակառակը. այդպիսի դեպքում նրանք միանում են և արտահայտվում մի նախաղասությամբ, վորից և ստացվում երազմակի յենթականերով կամ բազմակի ստորոգյալներով նախաղասություն: Որինակ՝ «Մեսրորը աշխատում է, և լեվոնը աշխատում է» համադաս նախաղասություններն ունեն ստորոգյալը (աշխատում ե), ուստի և կարող են արտահայտվել մի բազմակի յենթակայով նախաղասությամբ. «Մեսրորը և լեվոնը աշխատում են»:

Բազմակի յենթականերով կամ բազմակի ստորոգյալներով արտահայտված նախաղասությունը կոչվում է միավորյալ նախաղասություն:

ՄԻԶԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴՍՍՈՒԹՅՈՒՆ

Յերբեմն պարզ կամ բարդ նախաղասության մեջ կարող է լինել այնպիսի նախաղասություն, վորը վոչ համաղաս և նրան, վոչ ել ստորաղաս: Այսպիսի նախաղասությունները քերականորեն ել չեն կապակցվում այն նախաղասության հետ, վորի մեջ դանվում են. որինակ՝ Պետրոսը, այսպիս և ընկերոջս անունը, մասնակցել և Համամիութենական դյուղատնտեսական ցուցահանդեսին:

Վորեւ նախաղասության մեջ գտնվող, բայց նրա հետ քերականորեն չկապակցվող նախաղասությունը կոչվում է միջանկյալ նախաղասաւրյուն:

ՈՒՐԻՇԻ ՈՒՂՂԱԿԻ ՅԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Խոսելիս կամ դրելիս մենք հաճախ մեջ ենք բերում ուրիշի խոսքը: Ուրիշի խոսքը կարող ենք մեջ բերել կամ բառացի, կամ պատմողաբար՝ տալով նրա խոսքի իմաստը մեր բառերով. որինակ՝ Կոլտնեսության նախաղահը իր գեկուցման մեջ ասաց. «Մենք գերակատարել ենք մեր տարեկան պլանը». կամ Կոլտընեսության նախաղահն ասաց, վոր մենք գերակատարել ենք մեր տարեկան պլանը:

Յերբ ուրիշի խոսքը մեջ և բերվում բառացի, կոչվում է ուրիշի ուղղակի խոսք, իսկ յեթե մեջ և բերվում պատմողաբար, կոչվում է ուրիշի անուղղակի խոսք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Արտազրել հետեւյալ հատվածը, ընդգծելով՝ բարդ համադասական նախաղասությունները (մի դժով) և բարդ ստորաղասական նախաղասությունները (յերկու դժով):

«Բայց մի որ ամեն բան փոխվեց: Մի յերեկո, յերբ տուն եր յեկել և ուզում եր քնել, հանկարծ հրաշալի ձայներ հասան ականջին, ձայներ, վորոնք դուրս եյին կալիս աղայի բնակարանից»:

(Վ. ՓԱ.ՓԱ.ԶՅԱՆ)

2. Այս նույն հատվածի առաջին յերկու նախաղասությունները վերլուծել՝ ըստ նախաղասության անդամների:

VIII 750

ԿԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Ասուելու ժամանակ, խոսելու ձայնը, յեղանակը, ձայնի յեղանակը համապատասխան է առաջարկություն են տալիս լսողին ճշտորեն հասկանալու հոգած ասածի բոլոր նրբությունները:

Գրելիս այդ նրբությունները, թեև վոչ լրիվ, արտահայտ-
մում են կետարության միջոցով:

Կետադրության նշանները բաժանվում են յերեք խմբի.

ш) *Супружество* нշաններ.

բ) Առողակնության նշաններ.

գ) Բացահայտության նշաններ :

1. Տրնհության հշանկակի և մարդկակետը (:), միջազգականը (.), ստորագետը (,) և բուժը (^) :

Տրուհության նշանները ցույց են տալիս, թէ խոսքի կամ առաջապատճյան մեջ վորտեղ, ինչպիսի դադար պետք է տալ: Տրուհել նշանակում է բաժանել: Այդ նշանները ցույց են տալիս խոսքի կամ նախադատթյան բաժանումները:

Վերջակետը դրվում է յուրաքանչյուր պարզ և բարդ նախադասության վերջին, վորով խոսքը բաժանվում է ամբողջական նախադասությունների:

Միջակետը դրվում է.

ա) Բարդ համարասական նախադասության մեջ՝ համարաս նախադասությունների միջև, յեթե նրանք չաշտ են և բոլորը միասին մի պատկեր կամ մի ամբողջական նկարագրություն են տալիս. որինակ՝ Գարնանացանն սկսվում է. ՄՏ Կայանն արդեն ավարտել ե բոլոր տրակտորների վերանորոգումը. դաշտ են դուրս դայու կոյտնուեսության բոլոր տրակտորները:

բ) Ուրիշ ուղղակի խոսքեց առաջ. որինակ՝ բրիգադիրը ցնծությամբ ասաց. «Ծնկերնե՛ր, մեր բրիգադան այս տարի մասնակցելու յե Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեպն» :

կ) Կրծատված բառերից հետո. որինակ՝ ընկ. (ընկեր), պրոֆ. (պրոֆեսոր), Ղ. Աղայան (Ղաղարս Աղայան): Ստորակետը դրվում է.

ա) Յերկրորդական նախադասությունից առաջ կամ հետո .որինակ՝ թղթակիցը մեկնեց շրջկենտրոն, վորապեսղի մասնակցիք մամուլի աշխատողների շրջանային հավաքին։ Վոր Լեվոնը դերագանցիկ սովորող է, այդ բոլորին և հայտնի։

բ) Համադրաս նախաղասությունների և նախաղասության բաղմակի անդամների միջև։ որինակ՝ կոլտնտեսականներն այս տարի յուրաքանչյուր աշխորի դիմաց ստանալու յեն հացահատիկ, կաթնամթերք, միրդ և դրամ։ Աշտուր, Գուրգենը, Գառնիկը, Խաչիկը և Ռփիկը գնացին կիմու։

դ) Միջանկյալ բառերից և միջաղասար յերկրորդական նախադասություններից առաջ և հետո. որինակ՝ վարդուհին, ի հարկի, լավ սովորող ե։ Բրիգադիք Մինասը, վոր պարզեատրված և վոսկէ մեղալով, ընտրվեց դյուշխսորչընդի դեպուտատ :

դ) Յեվ շաղկապից առաջ, յեթե այդ շաղկապով կասլակցվող նախադասություններն ունեն տարբեկություն մականեր. որինակ՝ դարձունը յեկավ, և դաշտերում սկսվեց աշխատանքը;

Ե) Կոչարկանները նախաղասության մյուս անդամներից ան-
ջատելու համար . որինակ՝ Ընկերներ, պայքարենք հանուն բար-
ձըր բերքի :

Библиография

ա) Բացահայտյալի վրա. որինակ՝ Յեկավ Ավետիսը՝ դպրոցի գեղագնանցիկ աշակերտը:

բ) Արդիշի ուղղակի խոսքից առաջ, յեթե այն չափ կարճ է, որինակ՝ նա ասաց՝ դնում եմ:

դ) Նախադասության վորեե զեղչված անդամի փոխարեն՝ որինարկ՝ Յես դնում եմ թատրոն, իսկ դու՝ կինո (զեղչված և գնում ես ստորոգայլը):

դ) Դերբայական լրացումով՝ արտահայտված պարագայի վրա, յեթե այդ պարագան ունի կողմնակի լրացում. որինակ՝ Հսելով վարչության վորոշումը իր պարզեատրման մասին՝ Հայկը զնծությամբ համակվեց:

2. Առողքանության նշաններն են չեղտը (‘), հարցական նշանը (‘), և բացականչական նշանը (‘): Առողքանության նշանները բրվում են արտասանության, ձայնի յելեեցները և ուժը ցույց ապրու համար:

Շեշտը դրվում ե կոչարկանի և հրամայականի վրա. որինակ՝
կարդա՛ ու սովորի՛ր : Կամ :

«Ճե՛յ, ձե՛զ մատաղ բանվո՛ր տղերք,
Մե՛կ ել, մե՛կ ել, մի զա՛րկ տղեք
Մի զա՛րկ տղեք ցարի դահին,
Վոր խորտակվի նա հիմնովին» :

(Հ. ՀԱԿՈԲՅԱՆ)

Հարցական նշանը դրվում ե այն բառի վրա, վորով հարցում
ե արտահայովում . որինակ՝ ՅԵՌ ե սկսվում հունձը : Յեկե՞լ ե
բրիգադիրը : Քանի՞ տոկոսով ե կատարված պլանը :

Բայցականչական նշանը դրվում ե այն բառերի վրա, վորով
անհրաժեշտ ե յերկարացնել և զգացմունքով արտասանել . որի-
նակ . Կոցե՞ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխու-
թյունը : Ճե՛յ, այդ ո՞վ ե ձորում կանգնած :

3. Բացահայտական նշաններն են . չակերտները (« »), փա-
կազմերը (), կախման կետերը (. . .), բաղմակետը (.),
զիծը (—), զծիկը (—), յեթամնան (—) : Բացահայտման նշան-
ները դրվում են նախադասության միաբը բացահայտելու և
սպազելու համար :

Զակերտները դորձածվում են .

ա) ուրիշի ուղղակի խոսքի համար . որինակ՝ Լենինն ասել ե՝
«Սովորի՛ր, սովորի՛ր, սովորի՛ր» :

բ) Զակերտների մեջ են առնվում նաև հիմնարկությունների ,
կարգակերպությունների , թերթերի , գրքերի անունները :

գ) Զակերտները դործ են ածվում նաև ծաղրական իմա-
ստով :

Փակագծերի մեջ են առնվում այն միջանկյալ բառերն ու
նախադասությունները , վորոնք ազատ կերպով կարող են զեղչ-
վել . որինակ՝ Գիքորը (համանուն պատմածքի հերոսն ե) կա-
պիտալիստական քաղաքի զոհն ե :

Կալվածան կետերը (յերեք կետ) դրվում են կիսատ արտա-
հայտված նախադասության վերջում , մանավանդ , յերբ հեղինա-
կը ցանկանում է արտահայտել իր ուժեղ հույզը . որինակ՝
«Խեղդվում եր, չունչը կտրվում . . . ուղեց գոռալ . . . ևնրան թը-
վաց , վոր մի հոկա ձեռք վայրկենապես կորզում եր իրեն , ուշ-
ցումով բարձրացնում , գնում եր մի բոպեյաչափ և ճղելով ամ-
պերը , տանում եր հեռու , շատ հեռու . . . »

(Վ. ՓԱՓԱՋՅԱՆ)

Բազմակետը (չորս կետից վոչ պակաս) դրվում ե մեջ բեր-
վող հասպածի այն տեղում , վորտեղ մեջ բերողը կրծատումներ
ե կատարել . որինակ՝ «Մամուլը . . . մեր կուսակցության ամե-
նասուր և ամենասուժեղ զենքն ե» (Ստալին) :

Գիծը դրվում ե այն ժամանակ , յերբ հաջորդաբար դրում են
խոսակիցների անմիջական խոսքերը . որինակ՝

— Բրիդագիրին տեսա՞ր :

— Այո , դալիս եր շբջկենտրոնից :

— Խորհրդակցությունը կայացե՞լ ե :

— Առաջ , հետաձգվել ե :

— Այդ լավ ե , մենք ել կմասնակցենք :

Գծով անջատվում են նաև նախադասությունները :

Գծիկը դրվում ե յերկու բառ իրար միացնելու դեպքում .
որինակ՝ խրճիթ-ընթերցարան , տարեց-տարի :

Յենքամնան դրվում ե տողադարձի ժամանակ՝ տողի վեր-
ջում :

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Սրտագրել հետևյալ հատվածը՝ դնելով համապատասխան
կետադրական նշանները .

«Ավաղ Սինյորան ներեցեք ինձ վոր յես ձմեցի ձեզ և թեպետ
այլևս չեկա ձեզ մոտ բայց չմոռացա ձեզ այլակես ձեր այս նա-
մակն այսպես խնամքով չեյի պահի ինձ մոտ սա մի անդնահատ-
ելի զանձ և զոր զուք պարզեցիք ինձ և այս զանձն աչքիս
լույսի պես կպահեմ մինչեւ մահս վորովհետեւ յեթե ձեր այս նա-
մակը չեներ յես թերեւս այն չլինեյի ինչ վոր եմ այժմ յես չմո-
ռացա ձեզ այս բայց ինչպես յերեւմ ե զուք մոռացել եք այն
անդունդը վոր մեղ բաժանում ե իրարից զուք վերև ելիք յես
ներինը և այդ ձեզ իրավունք եր տալիս արհամարհանքով նայե-
լու գեղի ներքին բայց զուք հաշվի չեյիք առել վոր ներքին
գտնվողները յերեւմն թեղեր են առնում թռչում վերին և վրիժա-
ռության զգացումով լեցուն» :

(ՆԱՐ-ԴԱՄ)

ՎՈՃԻ ՄԱՍԻՆ

Հեռակայողը ամեն կերպ պետք է ձգտի իր վոճի հստակությանն ու պարզությանը:

Թղթակցությունները դրելիս մեծ ուշադրություն պետք է դարձնել ընտրված թեմայի՝ հիմնական այն հարցի վրա, վորի մասին գրվում է հոդվածը: Պահետք է կողմնակի դատողություններով և այլ բնագավառ ընդգրկող փաստերով ու մաքերով ծանրաբեռնել գրվածքը: Պետք է դորժածել մեր լեզվի հարստությունը՝ հօմանիշները, համեմատությունները, պատկերները, սակայն չպետք է բառերը գործածել անտեղի:

Հոդվածագիրը պետք է նկատի առնի, թե ինչի մասին է գրում իր թղթակցությունը և ըստ այնմ զի՞: Տարբեր բնագավառ ընդգրկող տարբեր հոդվածներ կամ տարբեր տեսակի հոդվածներ (թղթակցություններ, ոչերկներ, Փելյետոններ և այլն) պահանջում են տարբեր վոճ:

Թղթակցությունները պետք է դրել պարզ, սեղմ մտքերով: Իսկ յեթե գրվածքը ոչերկ է կամ Փելյետոն, ապա զրոյը կարող է վորոշ պատկերներով, համեմատություններով, սրամիս հակադրություններով այլելի հետաքրքիր դարձնել այն:

Ամեն կերպ պետք է աշխատել ցիտատները տեղին և լավ ողտագործել: Վոչ թե հոդվածը պետք է հալումարեցնել ցիտատին, այլ ցիտատները պետք է ողտագործել հոդվածի այս կամ այն միտքը պարզաբաներու, ավելի հատկանալի դարձնելու և հաստատելու համար: Ցիտատները պետք է հոդվածում քիչ տեղ ընդուն: Պետք է խույս տալ յերկար, տաղտկալի, մի քանի յերկորդական նախադասություններ պարունակող արտահայտություններից: Պետք է դրել կարծ, սեղմ, անպահույն:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել բառերի գործածության վրա:

Զգետք է տեղի անտեղի ոտար բառեր գործածել, մասնավանդ այն դեպքերում, յերբ հայերեն համապատասխան տերմին կամ բառ կա:

Բառի ուղղագրությունը և նշանակությունը ճշտելու համար պետք է դիմել բառարանին: Հայերեն բառարանի բացը մասամբ կարող է ծածկել ոռուս-հայերեն բառարանը: Այս կամ այն տեխնիկական բառի կամ արտահայտության հայերենը իմանացու համար պետք է դիմել այդ բառարանին:

Զգետք է գործածել այնպիսի բառեր, վորոնք թերթի՝ մեջ չակ ընթերցողի համար կարող են անհամականալի լինել: Գրելուց հետո պետք է մեծ ուշադրությամբ խմբագրել և կատարել համապատասխան կրծատումները, պետք է կրծատել այն բոլոր նախադասությունները, բառերը, վորոնց կրծատմամբ հոդվածի հիմնական միտքը չի տուժում: Պետք է կրծատել առանձնապես տաղտկալի առաջարանները, նյութից չեղվող դատողությունները:



Տել. Խմբագիր՝ Հ. ԱՅՎՈԶՅԱՆ

Գլանվածի լիազոր՝ Բ—1163

Պատ. № 406. տիրաժ 2000

Հանձնված և արտադրության 9/V 1940 թ.

Մտորադրված և տպադրության 23/VI 1949 թ.

Հայկական ԽՍՀ ԺԿԻ կողմէն կից թերթերի և ամսագրերի տպարտն, Ցերեվան.

ՀՀ Ազգային գրադարան



NL0375503

890

2

20h

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Издание „Хорурдайин Айастан“,
Ереван—1940